Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ս/թ. դեկտեմբերի 27-ին, ժամը **13:00**-ին Հայաստանի շախմատի ակադեմիան Շախմատի ակադեմիայի ակումբի հետ համատեղ կազմակերպում են «Շախմատի ակադեմիայի գավաթ - 2024» արագ շախմատի մրցաշարի երկրորդ փուլը:

Մրցաշարը կանցկացվի շվեյցարական մրցակարգով, 9 խաղափուլով՝ համաձայն ՖԻԴԵ-ի շախմատի կանոնների:

Մասնակիցներ

Մրցաշարին կարող են մասնակցել առնվազն երրորդ կարգ ունեցող շախմատիստները:

Մրցանակային ֆոնդ

Մրցանակային ֆոնդը կկազմի մուտքավճարների 70%-ը:

Հիմնական մրցանակներ					
I	**II**	**III**	**IV**	**V**	**Գումար**
Լավագույն արդյունք ցույց տված **շախմատիստուհի**					**Գումար**
Հատուկ մրցանակներ					
Լավագույն արդյունք ցույց տված **կարգային** մասնակից					Նվեր
Լավագույն արդյունք ցույց տված մինչև **12** տարեկան մասնակից					Նվեր
Լավագույն արդյունք ցույց տված մինչև 12 տարեկան աղջիկ մասնակից					Նվեր
Լավագույն արդյունք ցույց տված մինչև 10 տարեկան մասնակից					Նվեր
Լավագույն արդյունք ցույց տված մինչև 10 տարեկան աղջիկ մասնակից					Նվեր
Լավագույն արդյունք ցույց տված մինչև 8 տարեկան մասնակից					Նվեր
Լավագույն արդյունք ցույց տված մինչև 8 տարեկան աղջիկ մասնակից					Նվեր
25-րդ տեղ գրաված մասնակից					Նվեր

Ժամակարգ

5 րոպե ամբողջ պարտիայի համար՝ յուրաքանչյուր քայլի համար 3 վայրկյան հավելումով՝ սկսած առաջին քայլից:

Լրացուցիչ ցուցանիշներ

Հավասար միավորներ վաստակելու դեպքում մրցանակները չեն կիսվում, իսկ տեղերը կորոշվեն. հատված Բուհգոլցով, այնուհետև Բուհգոլցով, անձնական հանդիպումների արդյունքի /արդյունքների/ և սև գույնով խաղացած պարտիաների քանակով:

Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի ստանալու միայն մեկ մրցանակ:

Մուտքավճար

Կոչում/գործակից	Մուտքավճար
ՄԳ, ՄՎ, ԿՄԳ, ԿՄՎ	Անվճար
2200 և բարձր վարկանիշ ունեցող մասնակիցներ	2 500 ՀՀ դրամ
2100-2200 վարկանիշ ունեցող մասնակիցներ	3 000 ՀՀ դրամ
III,II, I կարգ – 2100 վարկանիշ ունեցող մասնակիցներ	3 500 ՀՀ դրամ

Ցուցակագրումը մինչև **դեկտեմբերի 25-ը, ժամը 15:00-ն:**

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ - Հիշեցնում ենք, որ մրցաշարի մասնակիցների գրանցումը կատարվում է օնլայն տարբերակով մինչև դեկտեմբերի 25-ը, 18:00-ն: Հայաստանի շախմատի ակադեմիայի կայքէջում https://www.chessacademy.am/ անհրաժեշտ է սեղմել **ԳՐԱՆՑՎԵԼ** կոճակը, լրացնել բոլոր դաշտերը և կատարել վճարումը:
Բանկային քարտի բացակայության դեպքում մասնակցության վճարները կարող եք փոխանցել «Շախմատի ակադեմիայի ակումբ»-ի հետևյալ հաշվեհամարին՝
Շահառու՝ «Շախմատի ակադեմիայի ակումբ» ՍՊԸ
Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/հ՝ 1570091773770100
Փոխանցում կատարելիս նպատակ դաշտում նշել մրցաշարը, մասնակցի անունը, ազգանունը և հայրանունը, ծննդյան տվյալները, կարգը, մարզիչը և կոնտակտային հեռախոսահամար:

Մրցաշարի մասնակցության բոլոր ծախսերը հոգում է գործուղող կազմակերպությունը:
Հեռախոսահամար՝ **010-448479, 099-646885:**